Հայաստանի Հանրապետության վարչապետի կողմից սահմանված «Լավագույն համայնք՝ գենդերային հարցերի լուծման ուղղությամբ» մրցանակաբաշխության հայեցակարգ

Formatted: Font: GHEA Grapalat

Կ Ա Ր Գ

ՏԵՂԱԿԱՆ ԻՆՔՆԱԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՄԱՐՄԻՆՆԵՐՈՒՄ ԳԵՆԴԵՐԱՅԻՆ ՀԱՎԱՍԱՐՈՒԹՅԱՆ ԱՊԱՀՈՎՄԱՆ ԲՆԱԳԱՎԱՌՈՒՄ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՐՉԱՊԵՏԻ ԱՄԵՆԱՄՅԱ ՄՐՑԱՆԱԿՆԵՐԻ ՇՆՈՐՀՄԱՆ

Formatted: Font: GHEA Grapalat

I. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

1. Սույն կարգով սահմանվում են <<Լավագույն համայնք գենդերային հարցերի լուծման ուղղությամբ>> Հայաստանի Հանրապետության վարչապետի ամենամյա մրցանակաբաշխության մրցույթին մասնակցելու հիմնական պայմանները և հավակնորդ համայնքների ընտրման ընթացակարգերը:

2. Սույն կարգի գործողությունը տարածվում է Հայաստանի Հանրապետության գյուղական և քաղաքային համայնքների վրա՝ բացառությամբ Երևան քաղաքի:

3. Գենդերային հավասարության ապահովման բնագավառում ամենամյա մրցույթի (այսուհետ՝ մրցույթ) կազմակերպման հիմնական նպատակը տեղական ինքնակառավարման մարմինների կողմից գենդերային հիմնահարցերի լուծմանն աջակցելն և համայնքային մակարդակում որոշումների ընդունման հարցում կանանց դերի բարձրացումն է:

4. Սույն կարգի մշակման համար հիմք է հանդիսանում <<Կանանց և տղամարդկանց հավասար իրավունքների և հավասար հնարավորությունների ապահովման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքը, մասնավորապես՝ 16-րդ հոդվածը, որի համաձայն տեղական ինքնակառավարման մարմիններն իրենց լիազորությունների շրջանակում միջոցառումներ են ձեռնարկում գենդերային հավասարության ապահովման պետական քաղաքականության իրագործման ուղղությամբ:

II. ՄՐՑԱՆԱԿԱԲԱՇԽՈՒԹՅԱՆ ԱՆՎԱՆԱԿԱՐԳԵՐԸ ԵՎ ՄՐՑԱՆԱԿՆԵՐԻ ՏԵՍԱԿՆԵՐԸ

5. Տեղական ինքնակառավարման մարմինների կողմից գենդերային հիմնահարցերի լուծմանն աջակցելու և համայնքային մակարդակում որոշումների ընդունման հարցում կանանց դերը բարձրացնելու նպատակով Հայաստանի Հանրապետության վարչապետը սահմանում է <<Լավագույն համայնք՝ գենդերային հարցերի լուծման ուղղությամբ>> մրցանակ /այսուհետ՝ մրցանակ/:

6. Մրցանակը տրվում է մրցույթում հաղթող ճանաչված գյուղական և քաղաքային համայնքներին:

7. Մրցանակի հիմնական տեսակը <<Լավագույն քաղաքային համայնք՝ գենդերային հարցերի լուծման ուղղությամբ>> և <<Լավագույն գյուղական համայնք՝ գենդերային հարցերի լուծման ուղղությամբ>> անվանակարգերով Հայաստանի Հանրապետության վարչապետի պատվոգիրն է ՝ սահմանված 1-ին, 2-րդ և 3-րդ մրցանակային տեղերի համար:

8. Մրցանակաբաշխության մասնակիցներին կարող են տրամադրվել նաև մրցանակներ Հայաստանի Հանրապետությունում գործող միջազգային կառույցների և այլ հասարակական կազմակերպությունների կողմից:

9. Մրցույթի արդյունքում հաղթող ճանանչված մասնակիցների գործունեությունը ներկայացվում է հասարակության լայն շրջանակներին՝ զանգվածային լրատվամիջոցների և տպագիր մամուլի միջոցով:

III. ՄՐՑՈՒՅԹԻ ԱՆՑԿԱՑՄԱՆ ԿԱՐԳԸ ԵՎ ՄՐՑՈՒՅԹԻՆ ՄԱՍՆԱԿՑԵԼՈՒ ՀԻՄՆԱԿԱՆ ՊԱՅՄԱՆՆԵՐԸ

Formatted: Font: GHEA Grapalat

10. Մրցանակաբաշխության մասին հայտարարությունը հրապարակվում է Հայաստանի Հանրապետության մարզպետարանների գենդերային հարցերով զբաղվող մշտական հանձնաժողովների /այսուհետ՝ Հանձնաժողով/ կողմից մինչև տվյալ տարվա մարտի 10-ը՝ Հայաստանի Հանրապետության մարզպետարանների կայքէջերում:

11. Հայտարարությանը կից տեղադրվում է նաև յուրաքանչյուր անվանակարգի համար նախատեսված հայտի ձևը, որը պետք է լրացվի հայտատուի կողմից և ներկայացվի Հանձնաժողովին առցանց կամ փոստով մինչև տվյալ տարվա մարտի 15-ը:

12. Հայտին կից համայնքները ներկայացնում են նախորդ տարվա ընթացքում համայնքային ծրագրերում գենդերային ուղղվածություն ունեցող միջոցառումների ցանկը:

13. Մրցանակաբաշխությունը կազմակերպվում է երկու փուլով:

14. Առաջին փուլում հայտատուների ընտրությունը կատարվում է Հանձնաժողովի կողմից, որը հավաքագրում է համայնքների կողմից ներկայացված հայտերը, տասնօրյա ժամկետում ամփոփում է տեղեկատվությունը՝ ընտրելով լավագույն 2 քաղաքային և 3 գյուղական համայնքներ, և կազմված արձանագրությունը մինչև տվյալ տարվա մարտի 25-ը ներկայացնում Հայաստանի Հանրապետության տարածքային կառավարման նախարարություն:

15. Հանձնաժողովի կողմից ընտրված լավագույն քաղաքային և գյուղական համայնքների ցանկերը տեղադրվում են Հայաստանի Հանրապետության մարզպետարանների և Հայաստանի Հանրապետության տարածքային կառավարման նախարարության կայք էջերում: Համայնքների ցանկերին կցվում են գենդերային ուղղվածությամբ ծրագրերի/միջոցառումների համառոտ նկարագրությունը:

16. Հայաստանի Հանրապետության փոխվարչապետը հանձնաժողովների կողմից ներկայացված արդյունքներն ամփոփելու և <<Լավագույն քաղաքային համայնք՝ գենդերային հարցերի լուծման ուղղությամբ>>, <<Լավագույն գյուղական համայնք՝ գենդերային հարցերի լուծման ուղղությամբ>> անվանակարգերում սահմանված 1-ին, 2-րդ և 3-րդ մրցանակային տեղերի համար հաղթողներին ճանաչելու նպատակով ձևավորում է մրցութային հանձնաժողով հետևյալ կազմով՝ 3 ներկայացուցիչ պետական կառավարման մարմիններից և 2 ներկայացուցիչ ոլորտում առավել լայն գործունեություն ծավալած միջազգային և տեղական/հասարակական կազմակերպություններից:

17. Երկրորդ փուլում համայնքների ընտրությունը կատարվում է մրցութային հանձնաժողովի կողմից:

8. Մրցութային հանձնաժողովը ուսումնասիրում և յուրաքանչյուր ցանկից ընտրում է 6-ական համայնք՝ 3 քաղաքային և 3 գյուղական, որի մասին կազմվում է արձանագրություն: Արձանագրության պատճենը և պարգևատրման վերաբերյալ առաջարկությունը ներկայացվում են Հայաստանի Հանրապետության կառավարության աշխատակազմ մինչև տվյալ տարվա ապրիլի 1-ը:

IV. ՀԱՎԱԿՆՈՐԴ ՀԱՄԱՅՆՔՆԵՐԻ ԳՆԱՀԱՏՄԱՆ ԿԱՐԳԸ

Formatted: Font: GHEA Grapalat

19. «Լավագույն համայնք՝ գենդերային հարցերի լուծման ուղղությամբ» մրցանակաբաշխության շրջանակներում քաղաքային և գյուղական համայնքներ ընտրելու գործընթացում գնահատումն իրականացվում է 100 միավորի շրջանակներում, որից՝

1) 10 միավոր սահմանվում է տեղական ինքնակառավարման մարմիններում կանանց և տղամարդկանց հավասարակշռված մասնակցության համար,

2) 90 միավոր սահմանվում է տեղական ինքնակառավարման մարմինների կողմից համայնքային ծրագրերում գենդերային ուղղվածություն ունեցող միջոցառումների նախատեսման և իրականացման համար:

23. Հանձնաժողովը և մրցութային հանձնաժողովն ընտրությունը կատարում են՝ հիմք ընդունելով համայնքի նախորդ տարվա գենդերային իրավիճակը և այդ ուղղությամբ նախորդ տարվա ընթացքում իրականացված գործունեությունը:

24. 10 միավոր ցուցանիշը գնահատվում է հետևյալ ենթաչափորոշիչների հանրագումարի արդյունքում՝

1) գենդերային հավասարության երաշխիքները տեղական ինքակառավարման մեջ ենթաչափորոշիչը գնահատվում է՝

ա. 2 միավոր, եթե համայնքի ղեկավարը կին է.

բ. 1 միավոր, եթե համայնքի ղեկավարը տղամարդ է:

2) Կանանց և տղամարդկանց զուգակշռված ներկայացվածության հասնելու նպատակով ընտրովի մարմիններում առավել քիչ ներկայացված սեռի թեկնածուների աջակցմանն ուղղված ենթաչափորոշիչը գնահատվում է՝

ա. 2 միավոր, եթե համայնքի ավագանու կազմում կանանց և տղամարդկանց ներկայացվածությունը հնարավորինս հավասարակշռված է /40%-60% հարաբերակցություն/:

բ. 1 միավոր, եթե համայնքի ավագանու կազմում առկա է առնվազն 20% կանանց ներկայացվածություն:

գ. 0 միավոր, եթե համայնքի ավագանու կազմում կանանց ներկայացվածությունը ցածր է 20%-ից:

3) Տեղական ինքնակառավարման մարմինների ու պաշտոնատար անձանց կողմից կանանց և տղամարդկանց՝ համայնքային ծառայություն ընդունվելու հավասար հնարավորություններ ապահովելու ենթաչափորոշիչը գնահատվում է՝

ա. 2 միավոր, եթե համայնքի ղեկավարի աշխատակազմի գենդերային կազմում առկա է կանանց առնվազն 40% ներկայացվածություն.

բ. 1 միավոր, եթե համայնքի ղեկավարի աշխատակազմի գենդերային կազմում առկա է կանանց առնվազն 20% ներկացվածություն.

գ. 0 միավոր, եթե համայնքի ղեկավարի աշխատակազմի գենդերային կազմում կանանց ներկայացվածությունը ցածր է 20%-ից.

4) Տեղական ինքնակառավարման մարմինների ու պաշտոնատար անձանց կողմից համայնքային ենթակայության կազմակերպություններում կանանց և տղամարդկանց ընդունվելու հավասար հնարավորություններ ապահովելու ենթաչափորոշիչը գնահատվում է՝

ա. 2 միավոր, եթե համայնքային ենթակայության կազմակերպություններում աշխատողների գենդերային կազմում առկա է կանանց առնվազն 40% ներկայացվածություն.

բ. 1 միավոր, եթե համայնքային ենթակայության կազմակերպություններում աշխատողների գենդերային կազմում առկա է կանանց առնվազն 20% ներկայացվածություն.

գ. 0 միավոր, եթե համայնքային ենթակայության կազմակերպություններում աշխատողների գենդերային կազմում կանանց ներկայացվածությունը ցածր է 20%-ից.

5) Համայնքի ղեկավարի աշխատակազմում՝ հայեցողական պաշտոններում նշանակվելու՝ կանանց և տղամարդկանց հավասար հնարավորություններ ապահովելու ենթաչափորոշիչը գնահատվում է՝

ա. 2 միավոր, եթե համայնքում հայեցողական պաշտոններ զբաղեցրած կանայք կազմում են առնվազն 40%.

բ. 1 միավոր, եթե համայնքում հայեցողական պաշտոններ զբաղեցրած կանայք կազմում են առնվազն 20%.

գ. 0 միավոր, եթե համայնքի հայեցողական պաշտոններում կանանց ներկայացվածությունը ցածր է 20%-ից:

25. 90 միավոր ցուցանիշը գնահատվում է հետևյալ ենթաչափորոշիչների հանրագումարի արդյունքում՝

1) տեղական ինքնակառավարման մարմինների կողմից իրենց լիազորության շրջանակում միջոցառումների ձեռնարկում ենթաչափորոշիչը գնահատվում է՝

ա. 30 միավոր, եթե տվյալ համայնքը մեկ տարվա կտրվածքով գենդերային ուղղվածության առնվազն 3 միջոցառում է իրականացնում, մասնավորապես՝

աա. Կազմակերպում է կլոր-սեղան քննարկումներ «Գենդերային քաղաքականության հայեցակարգի», «ՀՀ գենդերային քաղաքականության 2011-2015թթ. Ռազմավարական ծրագրի» և «Կանանց և տղամարկանց հավասարության մասին» օրենքի շուրջ՝ համայնքում իրազեկվածությունն այս հարցի շուրջ բարձրացնելու նպատակով և ներկայացնում է միջոցառման արձանագրությունը Հանձնաժողովին.

աբ. ստեղծում է գենդերային հարցերով զբաղվող աշխատանքային խումբ, որի գործառույթն է համայնքում գենդերային հիմնահարցեր բարձրացնելն ու դրանց լուծման ուղղությամբ առաջարկներ ներկայացնելը, գենդերային ուղղվածություն ունեցող համայնքային ծրագրերի ու թարմացված գենդերային վիճակագրության մասին ամենամյա տեղեկատվություն/հաշվետվություն պատրաստելն ու ներկայացնելը համայնքի ղեկավարին (անհրաժեշտության դեպքում նաևՀանձնաժողովին).

ագ. նախաձեռնում է կանանց կարողությունների զարգացմանն ու գենդերային հավասարության հաստատմանն ուղղված քննարկումներ/վերապատրաստումներ համայնքի գենդերային հարցերով զբաղվող աշխատանքային խմբի անմիջական մասնակցությամբ (օրինակ՝ համայնքային մակարդակում որոշումների կայացման գործում կանանց ընդգրկվածության, կանանց ՓՄՁ վարկեր տրամադրելու, կին թեկնածուներին տեղական ինքնակառավարման մարմինների ընտրություններում ընդգրկվելու համար աջակցության տրամադրման և այլ թեմաների շուրջ) թե՛ սեփական միջոցներով, և թե՛ հասարակական/միջազգային կազմակերպությունների աջակցությամբ՝ գենդերային գիտակցության բարձրացման և գենդերային հավասարության ապահովման նպատակով:

բ. 15 միավոր է գնահատվում, եթե տվյալ համայնքը մեկ տարվա կտրվածքով գենդերային ուղղվածության առնվազն 2 միջոցառում է իրականացնում՝

բա. կազմակերպում է կլոր-սեղան քննարկումներ «Գենդերային քաղաքականության հայեցակարգի», «ՀՀ գենդերային քաղաքականության

2011-2015 թթ. Ռազմավարական ծրագրի» և «Կանանց և տղամարկանց հավասարության մասին» օրենքի շուրջ՝ համայնքում իրազեկվածությունն այս հարցի շուրջ բարձրացնելու նպատակով և ներկայացնում է միջոցառման արձանագրությունը մարզպետարանի գենդերային հարցերով զբաղվող մշտական հանձնաժողովին.

բբ. ստեղծում է գենդերային հարցերով զբաղվող աշխատանքային խումբ, որի գործառույթն է համայնքում գենդերային հիմնահարցեր բարձրացնելն ու դրանց լուծման ուղղությամբ առաջարկներ ներկայացնելը, գենդերային ուղղվածություն ունեցող համայնքային ծրագրերի ու թարմացված գենդերային վիճակագրության մասին ամենամյա տեղեկատվություն/հաշվետվություն պատրաստելն ու ներկայացնելը համայնքի ղեկավարին (անհրաժեշտության դեպքում նաև մարզպետարանի գենդերային հարցերով զբաղվող մշտական հանձնաժողովին):

գ. 0 միավոր է գնահատվում, եթե տվյալ համայնքը մեկ տարվա կտրվածքով գենդերային ուղղվածության միջոցառումներ չի իրականացրել:

2) Գենդերային հավասարության հասնելուն ուղղված պետական նպատակային ծրագրերի և միջոցառումների մշակում, իրագործում և դրանց ֆինանսավորում ենթաչափորոշիչը գնահատվում է՝

ա. 30 միավոր, եթե համայնքի ղեկավարը կազմել է գենդերային տեսանկյունից զգայուն բյուջե՝ 15%-ն ուղղելով համայնքի սոցիալ-տնտեսական, կրթական և ռազմավարական այլ խնդիրների լուծման ուղղությամբ իրականացված ծրագրերին, որի շահառուների 50%-ը և ավելին կանայք են:

բ. 15 միավոր, եթե համայնքի ղեկավարը կազմել է գենդերային տեսանկյունից զգայուն բյուջե՝ 5%-ն ուղղելով համայնքի սոցիալ-տնտեսական, կրթական և ռազմավարական այլ խնդիրների լուծման ուղղությամբ իրականացված ծրագրերին, որի շահառուների 30%-ը և ավելին կանայք են:

գ. 0 միավոր, եթե համայնքի կողմից կազմված բյուջեն գենդերային տեսակետից չեզոք է:

3) Տեղական ինքնակառավարման մարմինների կողմից գենդերային հավասարության ուղղությամբ իրականացված գործունեության վերաբերյալ ՀՀ կառավարության որոշմամբ սահմանված կարգով ամենամյա տեղեկատվության ներկայացում Հանձնաժողովին ենթաչափորոշիչը գնահատվում է՝

ա. 30 միավոր, եթե համայնքի ղեկավարը հանձնաժողովին ներկայացնում է գենդերային ուղղվածություն ունեցող համայնքային

ծրագրերի մասին ամենամյա տեղեկատվություն (անդրադառնալով նաև համայնքի թարմացված գենդերային վիճակագրությանը) սահմանված ձևաչափով/կարգով և սահմանված ժամկետում:

բ. 15 միավոր, եթե համայնքի ղեկավարը հանձնաժողովին ներկայացնում է գենդերային ուղղվածություն ունեցող համայնքային ծրագրերի մասին ամենամյա տեղեկատվություն (անդրադառնալով նաև համայնքի թարմացված գենդերային վիճակագրությանը) սահմանված ձևաչափով/կարգով մինչև 7 աշխատանքային օր ուշացումով:

գ. 0 միավոր, եթե համայնքի ղեկավարը չի ներկայացնում գենդերային ուղղվածություն ունեցող համայնքային ծրագրերի մասին ամենամյա տեղեկատվություն Հանձնաժողովին: